# ՆԻՒԹԵՐ ԻՐԱՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

*«Տեսր արձանագրութեանց հասարակական ընդհ. ժողովների, Դավրէժ, 1899 թ. Մարտ 21»։*

*– Համաձայն մեր կատարած պրպտումների եւ Թաւրիզի հայոց ազգային առաջնորդարանում պահւած մատեանների, Թաւրիզի առաջին հասարակական ժողովները, որոնք գումարւել են դպրոցական հոգաբարձութեանց գործունէութիւնը քննելու եւ նոր տնօրինութիւններ կատարելու համար, եղել են 1899 թւի Մարտ 21-ին։ Այնուհետեւ երբ մշակւել եւ հաստատւել է «Ատրպատականի Հայոց Թեմի հիմնական Կանոնադրութիւնը» եւ ամենայն հայոց Կաթողիկոս Խրիմեան Հայրիկի 1903 թւի Փետրւար 7 եւ թիւ 198 սրբատառ Կոնդակով գործադրութեան է դրւել այդ, աստիճանաբար կազմաւորւել է ժողովական սիստեմը Ատրպատականի Թեմում։ Այդ թւականից սկսած թէ Պատգամաւորական ժողովների եւ թէ Թեմական Խորհուրդների նիստերը ունեցել են պաշտօնական արձանագրութիւններ, որոնք արձանագրւած են յատուկ մատեաններում։*

*Ինչ որ յատկանշական է, այն է որ 1899 թւից մինչեւ 1904 թիւը աստիճանաբար կազմաւորւել է ժողովական սիստեմը հասարակական աշխատանքները ղեկավարելու համար, եւ այդ առթիւ եղած արձանագրութիւնները, որոնք ամփոփւած են 58 էջանոց մի մատեանի մէջ բաւականին լոյս են սփռում այս նիւթի շուրջը։*

*Վերը յիշւած խորագիրը կրող մատեանը կազմւած է համարակալւած 58 էջից որի 46 էջն է յատկացւած նիստերի եւ ժողովների արձանագրութեանց եւ միւս 12 էջերը լրիւ դատարկ են, առանց արձանագրութեան։*

*Նկատի ունենալով որ հասարակական ժողովների այդ արձանագրութիւնները գրաւոր կերպով ներկայացնում են Ատրպատականի Հայոց Թեմի այդ օրերի ազգային-եկեղեցական կեանքը եւ ապագայ պատմագրի համար օգտագործելի են որպէս վաւերական նիւթեր ուստի ներկայացնում եմ* «Տեսր արձանագրութեանց հասարակական ընդհ. ժողովների, Դավրէժ 1899 թ. Մարտ 21» *մակագրութիւն ունեցող մատեանի լրիւ արձանագրութիւնները ստորեւ։*

1985 *Մայիս* 15
*Թաւրիզ*

ԷՄԻԼ ՅԱԿՈԲԵԱՆ

*ՏԵՍՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ*
*Հասարակական Ընդհ. ժողովների*

*Դավրէժ* 1899 *թ. Մարտ* 21.

## ՆԻՍՏ Ա.

1899 *Մարտի* 21-*ին Արամեան Դպրանոցի Թատերասրահում նախագահութեամբ Գերապատիւ Սրբազան Սահակ եպիսկոպոս Այվատեանի ժողով գումարւեց Ղալայի հասարակութեան անդամներից։ Ժողովի առաջ կարդացուեց նախորդ պատ. հոգաբարձութեան քառամեայ հաշիւը։ Ապա կազմուեց քննիչ յանձնաժողով քննելու նախորդ հոգաբարձութեան հաշիւները եւ արդիւնքը ներկայացնելու առաջիկայ ընդհանուր ժողովին, որ տեղի պիտի ունենայ ապրիլ ամսւայ* 11-*ին։ Յանձնաժողովի անդամներն են՝ Վարդան Տէր-Օհանեան, Մ. Մամեան եւ Ա. Զաքարեան։*

*Քարտուղար՝*
*Վահան Բժշկեան*

*Նախագահ ընդհ. ժողովի՝ Առաջնորդ Հայոց Ատրպատականի՝*
*Սահակ Եպիսկոպոս Այվատեան*

## ՆԻՍՏ Բ.

*Ապրիլ ամսւայ 11-ին 1899 թ. Արամեան դպրոցի թատերասրահում նախագահութեամբ Գերապատիւ Սահակ եպիսկոպոս Այվատեանի տեղի ունեցաւ երկրորդ Ընդհ. ժողով։*

*Ժողովը բացուած համարելով Գերապատիւ Հայր Նախագահը առաջարկեց ընդհանուր ժողովոց համար մի ներքին կանոնադրութիւն կազմել։ Ցայտնեց նաեւ որ մինչեւ այժմ Ատրպատականի Հայոց եկեղեցական եւ ազգային գործերը ծանրացած են միայն առաջնորդին վերայ, մանաւանդ այժմ, որ գործերն ու հանգամանքները բարդուած են, բարդուած են եւ քաղաքական պայմանները, ուստի ժողովուրդը պէտք է մասնակցի իւր հասարակական գործերի կառավարութեան, որով հարկաւոր է մի մարմին ընտրուի հայ ժողովրդի կողմից — թէ քաղաքից եւ թէ գաւառներից — որպէսզի գիտակից, աջակից եւ խորհրդակից լինի սրբազան առաջնորդին եւ որ կարող կը լինի միանգամայն մի ընդհանուր կանոնադրութիւն պատրաստել։*

*Ապա քննիչ յանձնաժողովոյ անդամ պրն. Աստուածատուր Զաքարեան կարդաց իւր տեղեկագիրը, որը առաջ է բերուած ստորեւ։*

Պրն. Յով. Ֆէնէրբեան *ակնարկեց քննիչ յանձնաժողովոյ գործը, որ քննադատել է նախորդ հոգաբարձութեան գործունէութիւնը։*

Վ. Բժշկեան.- *Նրանց պարտաւորութիւնն էր հաշիւները քննել եւ ոչ գործունէութիւնը։*

Վարդ. Տէր Օհանեան.- *Հաշիւների քննութիւնը համարեցէք պաշտօնական իսկ գործունէութեանը ոչ-պաշտօնական։*

Ն. Գորոյեան.- *Սակայն դուք մի հետեւանքի, եզրակացութեան չէք եկել։*

Վ. Տ. Օհանեան.- *Շատ թիւրիմացութիւններ, որ տարածուած էր, ջրուեցաւ։ Թէեւ հաշուեմատեանները համարակալութեան պահանջած կանոնների համաձայն չեն, սակայն ոչ մի կէտում սխալ չենք նկատել, հաշիւները հասկանալի եւ ճիշտ են։ Նոր շինութեան համար ծախսուած 700 թուման աւելորդ է. այդ դէպքում կարող էին միայն ժողովուրդին դիմել։*

Ֆէնէրբեան.- *Պատասխանելով Վ. Տէր Օհանեանին կասէ. նոր շինութեան ծախսուց մանրամասն հաշիւը եւ մատեանը չ'կայ, ապա ինչպէս կասէ, որ նրանք չնորհակալութեան արժանի են։*

Ն. Զօհրաբեան.- *Ըստ կանոնադրութեան հոգաբարձութիւնը կարող է ինքնակամ միայն 300 թուման ծախսել, իսկ ինչու 1700 թուման ծախսելու համար հոգաբարձութիւնը ժողով չի գումարեց հասարակութիւնից։*

Վ. Տէր Օհանեան.- *Կանոնադրութեան մէջ այդպիսի կէտ չկայ։*
*Անմիջապէս հին կանոնադրութեան մէջ այս կէտը ստուգուեցաւ, եւ այդ մասին ոչ մի յիշատակութիւն չգտնուեց։*

Զիլինկիրեան.-*Նախորդ ընդհ. ժողովի հաշուից 700 թուման բաց էր, իսկ այսօրուայ քննիչ յանձն. տեղեկագրից երեւում է, որ բաց չկայ։*

Հ. Նախագահ.- *Այդ բացը այս տարուայ բաց է միայն։*

Ն. Գորոյեան.- *Նախորդ հոգաբարձութեան գործունէութիւնն պախարակելի է. վասն զի ծախքերի դուռ են բացել առանց նախատեսելու իրանց եկամուտները։ Ինչ փող որ ստացել է, ծախսել է, ուստի նախ հոգաբարձութեան գործարքները անփոյթ եւ անհոգ են։*

Զ. Նազարբէգեան.- *Պատասխանելով իբրեւ նախորդ հոգաբարձութեան անդամ. «արած ծախքերը անխուսափելի ծախքեր էին, որոնք պիտի լինէին, որովհետեւ կեանքը թանգանալով ուսուցիչների ռոճիկները աւելացել են։ Գալով շինութեանը վերայ եղած 700 թուման աւելի ծախքին՝ պէտք է ասեմ, որ մի պարոն խոստացաւ տալու, չտուաւ, այդ դէպքում մենք ինչ միջոցով պիտի կարող անայինք առնել»։*

Վ. Տէր Օհանեան.- *Նախորդ հոգաբարձութեան գործունէութիւնը պախարակելի եւ անփոյթ չի կարելի անուանել, վասն զի Թովմաս Բէկի կինը փողը տուաւ միմիայն շինութեան համար։ Խօսք էր պատում ժողովրդի մէջ, որ իբր թէ 1600 թումանի զեղծումն կայ, բայց հաշիւների քննութիւնից ոչ մի զեղծումն չերեւաց։ Նոյն իսկ նոր հոգաբարձութիւնը իզուր 3 ամիս չարչարուեց հաշուեկշիռը պատրաստելու, քանի որ հաշիւները շատ պարզ են։*



Գորոյեան.- *Ամենահասարակ մարդուց սկսած մինչեւ պետութիւնները միշտ նախահաշիւ կը կազմեն իրենց մտից եւ ելից, իսկ նախորդ հոգաբարձութիւնը ծախքերի դուռը բանալով երբէք մտածած չէ մուտքերի համար մտածելու։*

Վ. Տ. Օհանեան.- *Միշտ մեղադրելով նախորդ հոգաբարձութիւնը, երբէք գովելի կէտեր էլ չյիշեցիք։ Նախորդ հոգաբարձութիւնը ըստ կանոնադրութեան ինչ որ ստացել էր իւր նախորդներից հոգութեամբ յանձնել է յետնորդին։*

Ֆէնէրբեան.- *Պրնք, յանձնաժողովի անդամները չնորհակալութիւն յայտնեցին, որ նախորդ հոգաբարձութիւնը 500 թուման էլ աւելացրել է։ Բայց այս տարի 800 թուման բաց ունենք։ Այս 800 թումանը որտեղից պիտի գտնենք։*

Հ. Նախագահ.- *Եկամտից հաշիւները ճիշտ են, զեղծումն չկայ. միայն զեղծումն պիտի համարել թէ արդեօք այդ ծախքերը պիտի լինէին թէ ոչ։ Հոգաբարձութիւնը իւր հաշիւները ներկայացնելիս պիտի ներկայացնէ նաեւ իր գործառնութեանց տեղեկագիրը, որով տեղի չէր տրուիլ նորանոր բացատրութեանց։ Ցոյս ունենք, որ նոր հոգաբարձութիւնը այսուհետեւ օրինակ կը հանդիսանայ իւր գործառնութեանց տեղեկագիրը տալով։*

Ֆէնէրբեան.- *Կը բողոքեմ շինութեան ծախուց մանրամասն մատեանի, 1893 թուականի մայր տոմարի եւ հոգաբարձութեան կնիքի անհետացման ու հին հոգաբարձութեան այստեղէ ժողովից բացակայութեան դէմ։*

Վ. Տէր Օհանեան.- *Կէտ առ կէտ կարդացուի տեղեկագիրը եւ նկատողութեան առնուի։*

Ն. Տէր Օհանեան.- *Ինչն է պատճառը, որ նոր հոգաբարձութիւնը քիչ ժամանակի ընթացքում հաշիւները չը պատրաստեց. եթէ այդքան հեշտ էր յանձնաժողովի համար։*

Մ. Նազարբէկեան.- *Երկար ժամանակ հին հոգաբարձուները հաշուեմատեանները չէին յանձնում։ Մինչեւ անգամ մենք գրաւոր կերպով դիմեցինք հայր նախագահին, որ մինչեւ հաշիւները չը ներկայացուին մենք չենք ընդունի պաշտօննիս, այս է պատճառը, որ հաշիւները պատրաստելը ուշացաւ։*

Հ. Նախագահ.- *Ապա հայր նախագահը կարդաց տեղեկագիրը կէտ առ կէտ եւ երրորդ կէտի համար նկատեց, որ այդտեղ առաջարկուած խնդիրները հոգաբարձական ժողովոյ արձանագրութեան մատեանի մէջ չ'պիտի արձանագրուէին այլ ուրիշ մատեանի մէջ, որ յատկացրուած կը լիներ Ընդհանուր ժողովոց արձանագրութեանց։*

Ֆէնէրբեան.- *Երբ նոր կընտրուին հոգաբարձուք, իրենց ընտրութեան մասին կը յիշատակուի հոգաբարձական ժողովոց արձանագրութիւնք մատեանի առաջին նիստին մէջ։*

Հ. Նախագահ.- *Բացատրեց տեղեկագրի 5-րդ կէտը։*

Ֆէնէրբեան.- *Գիւղերի եկամուտները այս տարի եթէ չստացուին, կարծեմ Ընդհ. բացը 1200 թուման պիտի լինի։*

Գորոյեան.- *Նորից կը կրկնեմ, որ իւր մուտքի ու ելքի նախահաշիւը պիտի կազմէր հոգաբարձութիւնը եւ ապա իւր գործը անէր։*

Հ. Նախագահ.- *6-րդ կէտ տեղեկագրի. հոգաբարձութիւնը պիտի դիմէր ժողովրդեան, այս կէտում միայն ներելի չէ։*

Խաչիկ Սարաեան.- *Քննիչ յանձն. իւր սահմանն անցել է գործառնութիւնը քննելով։ Միմիայն պակասութիւններ է գրել եւ միւս կողմից չնորհակալութեան քուէ կառաջարկէ։*

Մ. Նազարբէկեան.- *Անձեռնմխելի գումարները ծախսելուն համար նախորդ հոգաբարձութիւնը անհոգ եւ անփոյթ է գտնուել։*

Ն. Նախագահ.- *Քանի որ ներքին կանոնադրութիւն չունենք, ուստի խիստ կերպով չենք քննել նախորդ հոգաբարձութեան գործառնութիւնը։ Տեղեկագիրը, որ 9 յօդուածներից էր բաղկացած, մեծամասնութեան քուէով անփոփոխ ընտրուեցաւ եւ չնորհակալութիւն յայտնուեց քննիչ յանձնաժողովոյ անդամներին։*

Մ. Նազարբէկեան.- *Լաւ երեւոյթ է, որ քննիչ յանձնաժողով է ընտրուած քննելու գործերը։ Ապա հարցնում է թէ «Արդեօք հոգաբարձութիւնը պատասխանատու է այս եւ այն անձին տուած դրամին համար, իսկ կալուածքները մի որեւէ անհատի անունով են, արդեօք այսպէս պէտք է շարունակուի։*

Վ. Տէր Օհանեան.- Հոգաբարձութիւնը իւր ստացած եւ այլոց տրուած դրամների համար պատասխանատու է:

Մ. Նազարբէկեան.- 1500 թումանի չափ դրամներ կան որոնք պարտաւոր է նախորդ հոգաբարձութիւնը գանձելու:

Հ. Նախագահ.- Այս մուրհակները, որոնք նոր հոգաբարձութիւնը կուզէ, կարող է պահանջել, որ հին հոգաբարձութիւնը գանձէ եւ յանձնէ ներկայ հոգաբարձութեան:

Մ. Նազարբէկեան.- Կալուածագրերը, որոնք մի անհատի անունով են, փոխել եւ ազգային դարձնել:

Ն. Տէր Օհանեան.- Որ այսքան թերութիւններ են յառաջ գալիս, բիւջէի բացերը, կալուածագրերի այլոց անձանց անունով գրուիլը այդ ցոյց է տալիս, որ մի կանոնադրութիւն անհրաժեշտ է հոգաբարձութեան գործառնութեան սահմանները գծելու:

Հ. Նախագահ.- Այո, ինչպէս արդէն յիշեցինք սկզբում, պէտք է կանոնադրութիւն կազմել:

## Տեղեկագիր քննիչ յանձնաժողովի

Համաձայն 1899 թ. Մարտ 21-ին կայացած ընդհանուր ժողովի որոշման յանձնուեցաւ մեզ քննել 1894–1898 ուսումնական տարիների հոգաբարձութեան գործունէութիւնը: Առ այս իբրեւ աղբիւր ստացանք նոր հոգաբարձութեան հաշուեմատեանները ու արձանագրութեան տետրակը:

Առաջին անգամը լինելով քննիչ յանձնաժողովի սովորութիւնը մեզանում, հարկաւ պիտի երեւան գային մի քանի դժուարութիւններ, որոնք բնականաբար առաջ են եկել այն հանգամանքից, որ պաշտօնավարող հոգաբարձութիւնը անսովոր լինելով հասարակական հաշուետուութեան, իւր պարտականութիւնը չէ համարել օրինակ՝ ծախուց մանրամասն հաշիւներ ներկայացնել, իւրաքանչիւր տարեշրջանի վերջում ընդհանուր ժողով հրաւիրել եւ ներկայացնել կամ նոր տարեշրջանի գործունէութիւնը տպագրուած ցրուել հասարակութեանը եւ այլն: Այդ եւ նման խնդիրները, որոնք իւրաքանչիւր օրինական հասարակութեան անհրաժեշտ պայմաններն են, պակասում էին, մեզ յանձնուած փաստաթղթերի մէջ եւ որոնց բացակայութիւնը դժուարացնում է քառամեայ բարդուած հաշիւների մանրամասն քննութիւնը ու ստուգութիւնը: Ուստի եւ քննիչ յանձնախումբը պատիւ ունի յայտնելու, որ իւր պաշտօնավարութիւնը յիշեալ յարգելի պատճառներով օրինակելի դառնալ չէր կարող, իսկ ինչ որ հնարաւոր էր անել մատեանների հիման վրայ, յոյս ունի կատարած լինել եւ սոյն տեղեկագրով ներկայացնում է իւր քննութեան արդիւնքն եւ եզրակացութիւնները ի գիտութիւն յարգելի ընդհ. ժողովին:

1.- Հաշուեմատեանները տումարակալութեան պահանջած բոլոր օրինաւորութիւնները չունէին, օրինակ՝ Մայր հաշիւն առանց օրհաշուի էր եւ ցանկ չունէր, այնպէս որ իւրաքանչիւր հաշուի համար մենք ստիպուած էինք մի քանի տասնեակ երեսներ աջ ու ձախ դարձնել շարունակ:

2.- Զնայելով վերոյգրեալ թերութեանցը ներկայացուած հաշիւները բաւականին հասկանալի եւ ճիշտ գտանք:

3.- Կանոնաւոր արձանագրութեան մատեան չկայ, եղածն էլ շատ թերի է: Այնպիսի կարեւոր դէպքերի արձանագրութիւններ, ինչպէս այդ քառամեայ շրջանում տեղի ունեցած մի քանի ընտրութեանց եւ հրաժարեցման խնդիրներ, բոլորովին յիշատակուած չեն, մինչդեռ շատ կարեւոր էին ապագայի համար:

4-. Հասկանալի չէ թէ ինչ դիտումներով 96/97 ուս. տարի հոգաբարձութիւնը միացաւ Էլլաւայի հոգաբարձութեան հետ, որի շնորհիւ նիւթապէս վնասուել է, իսկ բարոյական օգտի մասին ոչինչ նկատելի չէ: Հասկանալի չէ նաեւ նրանց բաժանման պատճառը:

5.- Հոգաբարձական մարմինը երեք տարով ընտրուած լինելով իւր իրաւունքը չը պէտք է համարէր ազգային կալուածները հինգ տարով կապալով տալը:

6.- Ի նկատի ունենալով դպրոցների դրամական սուղ վիճակը՝ 1700 թումանաչափ դրամ ծախսելը նոր շէնքի վերայ կարելի էր արդարացնել միմիայն անհրաժեշտութեան եւ կատարեալ օգտակարութեան դէպքում:



7.- Նորակառոյց սենեակներից երկուսը բոլորովին հակառողջապահական են, հետեւաբար եւ նրանց համար ծախսուած գումարը պէտք է կորուստ համարել:

8.- Նոր շէնքի տնտեսական կամ հակատնտեսական լինելը ստուգելու համար, անհրաժեշտ տետրակը Սրբազան Նախագահի գրաւոր պատասխանից յայտնուեցաւ, որ չէ գտնուել, ուստի եւ անհնարին եղաւ ստուգել թէ որքան բարեխղճօրէն է կատարուել այդ մեծ ծախքի գործը:

9.- Պաշտօնավարութեան շրջանի սկզբում հոգաբարձութեան յանձնուած դրամագլուխը հինգ հարիւր թումանաչափ աւելացել է, եթէ միայն պրն. Համբարձում եւ հանգուցեալ Զաքարիա Թումանեանների նուիրած 700 թումանը եւ Տիկին Նունէ Սարգսեանցի կտակած 105½ թումանը անձեռնմխելի չը համարենք:

Ստորագրութիւնք՝

Ա. Զաքարեան Վ. Տէր Օհանեան Մ. Մամիեան

Նախագահ Ընդհ. Ժողովի Առաջնորդ Հայոց Ատրպատականի
Սահակ Եպիսկոպոս Այվատեան

Քարտուղար՝
Վահան Բժշկեանց

## ՆԵՐԿԱՅԻՍԹԵԱՆ ԳՈՒՄԱՐ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ

Բերդ թաղի Թաւրիզոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ քահանայ
Բերդ թաղի Թաւրիզոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ երեցփոխան
Արամեան եւ Աննայեան վարժարանների հոգաբարձութեան պատգամաւոր՝ Նազար Գորոյեան
Արամեան եւ Աննայեան վարժարանների ուսուցչաց խմբի պատգամաւոր
Բերդ թաղի Ծխականների պատգամաւոր. 1.
Բերդ թաղի Ծխականների պատգամաւոր. 2.
Բերդ թաղի Ծխականների պատգամաւոր. 3.
Բերդ թաղի Ծխականների պատգամաւոր. 4.
Էջլապատ թաղի Թաւրիզոյ Ս. Սարգիս եկեղեցւոյ քահանայ
Էջլապատ թաղի Թաւրիզոյ Ս. Սարգիս եկեղեցւոյ երեցփոխան
Հայկազեան եւ Թամարեան վարժարանների հոգաբարձութեան պատգամաւոր՝
Մատթէոս Ցովսէփեան
Հայկազեան եւ Թամարեան վարժարանների ուսուցչաց խմբի պատգամաւոր՝ Միքայէլ Զառաֆեանց
Էջլապատ թաղի Ծխականների պատգամաւոր 1.
Էջլապատ թաղի Ծխականների պատգամաւոր 2.
Էջլապատ թաղի Ծխականների պատգամաւոր 3. Տոքթ. Կ. Դ. Փաշայեան
Էջլապատ թաղի Ծխականների պատգամաւոր 4. Տիգրան Ռաշմաճեան
Արդաբիլի պատգամաւոր
Արդաբիլի պատգամաւոր
Մարաղայի պատգամաւոր
Մէշափառ Մնջուանի պատգամաւոր
Մակուի պատգամաւոր Տիգրան Ռաշմաճեան
Խոյի պատգամաւորներ Մարտիրոս Ցարութիւնեանց
Ուրմի եւ Բարանդուզի պատգամաւոր Տօքթ. Կ. Դ. Փաշայեան
Սալմաստի պատգամաւորներ
Տրզմառի պատգամաւորներ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

*Համաձայն Նորին Վեհափառ Տ. Տ. Մկրտիչ Կաթողիկոսի սրբատառ կոնդակի՝ տուեալ յ 2 ն Փետր. 1901 ամի համարաւ 205. սոյն 22 ապրիլի 1901 ամի ստորագրող պատգամաւորքս ընդհանուր ժողով գումարուելով ազգային առաջնորդարանի դահլիճի մէջ, ընդ. նախագահութեամբ Գեր. Տէր Սահակ եպիսկոպոսի Այվատեան, զկնի համաձայնութեան բաց քուէով ընտրողական Ընդհ. ժողովի համար դիւան կազմեցինք այսպէս. Մեծ. Նազար էֆ. Գորոյեան ատենապետ եւ Վահան Բժշկեան քարտուղար։*

*Ա.- Ժողովը բացուեցաւ Ն. Վեհափառութեան Կոնդակի յոտընկայս ընթերցմամբ։ Ապա Նորին Սրբազնութիւնը համառօտաբար բացատրեց ներկայ եղող պատգամաւորներին, որ թէեւ հայոց եկեղեցու հնաւանդ սովորութեամբ ժողովուրդն է միշտ ընտրել իւր առաջնորդին, բայց վերջին ժամանակներս ինչ ինչ պատճառների համար Ատրպատականի ժողովուրդը ձեռնհաս չ'լինելով այս արտօնութիւնը վայելել, արդ Նորին Վեհափառութիւնը բարեհաճել է այս առանձնաշնորհութիւնը վերանորոգել եւ շնորհել Ատրպատականի հայոց։ Ուստի ժողովականքը միահամուռ յոտընկայս իրենց խորին երախտագիտութիւնը եւ շնորհակալութիւնն յայտնեցին եւ ցանկացան նոյնը գրաւոր ներկայացուի առ ոտս Նորին Վեհափառութեան։*

*Եւ ապա ժողովուած պատգամաւորները յետ կանխօրէն խորհրդակցութեան եւ համաձայնութեան բացարձակ քուէով եւ միաձայն հաւանութեամբ ընտրեցին Գերապատիւ Արիստակէս Արքեպիսկոպոս Սեդրակեանին Ատրպատականի Վիճակի հայոց համար առաջնորդ։*

*Ի վերջոյ ժողովս գնահատելով Նորին Սրբազնութեան Գեր. Տ. Սահակ եպիսկոպոսի եռամեայ գործունէութիւնը իւր յատուկ շնորհակալութիւնը յայտնեց եւ կամեցաւ արձանագրել այս։*

*Նախագահ Առաջնորդական Ընդհ. Ժողովի*
*Սահակ Եպիսկոպոս Այվատեան*

*Ատենապետ Ժողովի՝*
*Նազար Գորոյեան*

*Ատենադպիր Ժողովի՝*
*Վահան Բժշկեանց*

*Պատգամաւորք Առաջնորդական Ընտրութեան*

*Քահանայ Բերդաթաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Մկրտիչ աւագ քհնյ. Տէր Ղազարեան*
*Քահանայ Լիլաւայ թաղի Ս. Սարգիս եկեղեցւոյ Յակոբ քհնյ. Տէր Յակովբեան*
*Պատգամաւոր Արամեան եւ Ս. Աննայեան դպր. հոգաբարձութեան Նազար Գորոյեան*
*Պատգամաւոր Արամեան եւ Ս. Աննայեան դպր. ուսուցչաց Աբեղնագովք Ալէքսանեան*
*Պատգամաւոր Բերդաթաղի ծխականաց Սոլոման Սակինեանց*
*Պատգամաւոր Բերդաթաղի ծխականաց Սարգիս Տէր Օհանով*
*Պատգամաւոր Բերդաթաղի ծխականաց Գալուստ Ա. Վարդանեան*
*Պատգամաւոր Բերդաթաղի ծխականաց Մ. Բժշկեանց*
*Պատգամաւոր Լիլաւայի Հայկազ. եւ Թամար. դպր. հոգաբարձ. Մատթէոս Յովսէփեան*
*Պատգամաւոր Լիլաւայի Հայկազ. եւ Թամար. դպր. ուսուցչաց Միքայէլ Զառաֆեանց*
*Պատգամաւոր Ս. Աստուածածին եկեղեցւոյ երեցփոխ. Նարիման Մելիք-Զօհրաբեան*
*Պատգամաւոր Ս. Սարգիս եկեղեցւոյ երեցփոխ. Արշակ Ղորդանեան*
*Պատգամաւոր Լիլաւայ թաղի ծխականաց Բաղդասար Մելիք-Սարգսեանց*
*Պատգամաւոր Լիլաւայ թաղի ծխականաց Յակովբ Մելիք-Սարգսեանց*
*Պատգամաւոր Լիլաւայ թաղի ծխականաց Տիգրան Ռաշմաճեան*
*Պատգամաւոր Լիլաւայ թաղի ծխականաց Տօքթ. Կ. Դ. Փաշայեան*
*Պատգամաւոր Արդաբիլի Զաքարիա Նազարբէկեան*
*Պատգամաւոր Արդաբիլի Թադէոս Աֆթանդիլեանց*



*Պատգամաւոր Մարաղայի Մ. Աղաբէգեանց*
*Պատգամաւոր Մարաղայի Պօղոս Ա. Տ. Միքայէլեանց*
*Պատգամաւոր Մէշափարայ եւ Մնջուանի (Ղարադաղի) Բաղդասար Մելիք-Սարգսեանց*
*Պատգամաւոր Մէշափարայ եւ Մնջուանի (Ղարադաղի) Յակովբ Մելիք-Սարգսեանց*
*Պատգամաւոր Տիզմարի (Ղարադաղի) Զաքարիա Նազարբէկեան*
*Պատգամաւոր Տիզմարի (Ղարադաղի) Վահան Բժշկեան*
*Պատգամաւոր Մակուի Տիգրան Ռաշմաճեան*
*Պատգամաւոր Մակուի*
*Պատգամաւոր Խոյի Խաչատուր Տէր Զաքարեանց*
*Պատգամաւոր Խոյի Մարտիրոս Յարութիւնեանց*
*Պատգամաւոր Ուրմիոյ եւ Բարանդուզի Տօքթ. Կ. Դ. Փաշայեանց*
*Պատգամաւոր Ուրմիոյ եւ Բարանդուզի Համբարձում Մելիք-Սարգսեանց*
*Պատգամաւոր Սալմաստի Զիբ. Բուդաղեան*
*Պատգամաւոր Սալմաստի Սմբատ Բուդաղեանց*

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ

*1901 թւի Մայիսի 15-ին Թաւրիզի Հայոց Առաջնորդարանի Դահլիճում Ատրպատականի Թեմի պատգամաւորները ժողով գումարեցին Վեհափառ Կաթուղիկոսի թիւ 205 կոնդակի համեմատ Ատրպատականի Հայոց Առաջնորդ ընտրելու համար։*

*Արիստակէս Արքեպիսկոպոս Սեդրակեանի հրաժարուելուց յետոյ Վեհափառ Կաթուղիկոսի հեռագրի համեմատ ընտրողական ժողովի նախագահ Տէր Սահակ Եպիսկոպոս Այվատեանը կրկին ընտրութիւն էր նշանակել սոյն Մայիսի 11-ին։ Բայց այս օրը պատգամաւորներից մի քանիսի կողմից խնդիրներ յարուցեցան.*

*1.- Պատգամաւորները ի նկատի չունեն մի այնպիսի անձնաւորութիւն, որի վերաբերմամբ համաձայնութեան գան միաձայն ընտրութիւն կատարելու. ուստի պատգամաւորների կողմից դիմել Վեհափառ Կաթուղիկոսին եւ յայտնել, որ Պատգամաւորական ժողովը իրեն անձեռնհաս է համարում ընտրութիւն կատարել, այդ պատճառով խնդրում է Վեհափառ Կաթուղիկոսից, որ ինքը իւր հաճութեամբ ուղարկէ Ատրպատականի Թեմական Առաջնորդ որին եւ կամենում է։ Դրա դէմ ուրիշ պատգամաւորները հետեւեալ պատճառաբանութիւնները բերին. որ պատգամաւորները իրաւունք չունին իրենց ընտրող ժողովրդին զրկել Վեհափառ Կաթուղիկոսի տուած այդ մեծ արտօնութիւնից եւ դարձնել Վեհափառին ժողովրդին շնորհուած նրա իրաւունքը։ Ապա՝ պատգամաւորները թէեւ չեն կարող միաձայնութեամբ մէկին ընտրել, բայց ձայների մեծամասնութեամբ միշտ կարող են։*

*2.- Դիմել Վեհափառին եւ ուզել մի ցանկ առաջնորդութեան յարմար հոգեւորականների. դրա դէմ պատճառաբանուեց, որ դրանով պատգամաւորները ազատ ժողովրդական ընտրութիւն կատարած չեն լինիլ։*

*3.- Ընտրութիւնը յետաձգել անորոշ ժամանակով, մինչեւ որ կարելի լինի այս կամ այն եկեղեցականի մասին մանրամասն տեղեկութիւն ժողովել, որպէսզի ընտրութեան մէջ սխալուած չը լինին։ Սրա դէմ պատճառաբանուեց, որ պատգամաւորները մինչեւ այժմ արդէն այդ մասին պիտի մտածած լինէին։ Բայց որովհետեւ նոյն օրը արդէն ժամանակը ուշ էր ընտրութիւն կատարելու համար եւ աւելի լաւ կը լինէր, որ պատգամաւորները մի փորձ էլ անէին համաձայնութեան գալու՝ որոշուեց ժողովը յետաձգել ոչ թէ անորոշ ժամանակով, այլ մինչեւ Մայիսի 15-ը։*

*Բայց այսօրուայ ժողովում Ատենապետ Նազար էֆ. Գորոյեանը առաջարկեց իբրեւ առաջնորդական թեկնածու միաձայն ընտրել երկու անձնաւորութիւն, որովհետեւ պատգամաւորները չը կարողացան մի անձնաւորութեան վերայ համաձայնել, եւ դրանց առաջարկել Վեհափառ Կաթուղիկոսին, որ ըստ իր կամքի ուղարկի, որին յարմարագոյն կը համարի։ Բայց ժողովի նախագահ Տ. Սահակ եպիսկոպոս Այվատեանը բացատրեց, որ այդ ձեւը հակառակ է Հայաստանեայց Եկեղեցու ոգուն, որով պէտք է ընտրել մի անձնաւորութիւն իբրեւ առաջնորդ եւ ոչ թէ մէկն էլ իբր կանդիդատ։*

Ապա Պ. Ատենապետը առաջարկեց իբրեւ վերջին միջոց, որ բոլոր պատգամաւորները հրաժարուին իրենց պաշտօնից, բայց այդ եւս չընդունեց մեծամասնութեան կողմից, որովհետեւ, պատճառաբանուեց, ձայների մեծամասնութեամբ հնարաւոր է ընտրութիւն կատարել։

Դրանից յետոյ պատգամաւորներից մէկը մի ծրար ներկայացրեց ուղղուած ընտրողական ժողովի պարոն Ատենապետին։ Պ. քարտուղարը կարդաց գրութիւնը. դուրս եկաւ, որ պատգամաւորներից ոմանք ապօրինի են ճանաչում ընտրուած պատգամաւորներից միքանիսին, ուստի յայտնում են, որ ժողովին չեն մասնակցել մինչեւ որ իրենց պահանջներին գոհացում չը տրուի։ Թղթին ստորագրել էին ներկայ պատգամաւորներից մօտ տասս մարդ, որոնք ձայների մեծամասնութիւն չէին կազմում։ Ընտրուած պատգամաւորների օրինաւորութեան մասին Սրբազան Նախագահը առաջին ընտրողական ժողովում բացատրութիւն տուել էր. բացի այդ նոյն առաջին ժողովին Պ. Ատենապետին մի բողոք էր ներկայացուած, որի վերաբերմամբ ժողովը լռութեամբ անցաւ, քանի որ Պ. Ատենապետը ժողովի առաջ բողոքը չը կարդաց նոյնիսկ, որով լռելեայն ընդունեց բողոքի անհիմն լինելը։ Բացի այդ Սրբազան Նախագահը նորից կէտ առ կէտ ջրեց բողոքը՝ իսկ պատգամաւորներից ոմանք յայտնեցին, որ այդ բողոքը ապօրինաւոր է, քանի որ բողոքին ստորագրող-պատգամաւորները բացի այն, որ մի անգամ արդէն ընտրութիւն կատարել են եւ իրենց ստորագրութիւնները դրել են, այժմ իրենց կողմից ապօրինի ճանաչուող պատգամաւորների ստորագրութեանց հետ միասին եւ ընտրութեան ատենագրութիւնն էլ ուղարկել են Վեհափառ Կաթուղիկոսին, Երկրորդ ընտրողական ժողովին եկել մասնակցել են առանց այդ խնդիրները բարձրացնելու, դրանից յետոյ նախապատրաստական ժողովում փորձեր են արել միաձայնութիւն կայացնել երկու անձի վրայ, ապա այսօրուայ ժողովում էլ առաջարկութիւններ են արել, որոնք չեն ընդունել մեծամասնութեան կողմից, ապա ուրեմն պարզ էր, որ բողոքը արւում էր, որովհետեւ բողոքողները ձայների մեծամասնութիւն չունէին։ Հակառակ դէպքում նոքա սկզբից չը պիտի մասնակցէին ոչ մի ժողովի եւ աշխատէին, որ ապօրինի պատգամաւորներ չը լինին ընտրողական ժողովում, եթէ կային։

Այս բացատրութիւնները լսելուց յետոյ բողոքողները այնուամենայնիւ ժողովից հեռացան. հեռացաւ նաեւ Դիւանը իր հետ տանելով բողոքագիրը։

Բայց մնացած պատգամաւորները նկատելով, որ բողոքը ներկայացուած է ոչ մեծամասնութեան կողմից, ուստի եւ միւս պատգամաւորները չը պիտի զրկուին իրենց իրաւունքից, կազմեցին նոր Դիւան Ատենապետ՝ Դօքտոր Կարապետ Փաշայեան, քարտուղար Պ. Մարտիրոս Յարութիւնեան։

Ժողովը շարունակեց իր նիստը եւ ընդհանուր հաւանութիւն առնելուց յետոյ բացարձակ քւէարկութեամբ ընտրեց Բարձրապատիւ Եղիշէ Վարդապետ Մուրադեանին Թեմական Առաջնորդ Հայոց Ատրպատականի, որի վերաբերմամբ երեկ մասնաւոր կերպով գումարուած նախապատրաստական ժողովում բողոքող պատգամաւորները իսկ համաձայնութեան էին եկել, բայց առաջարկելով, որ նրա հետ միասին դրուի եւ մի երկրորդը, որի մասին մեծամասնութիւնը չը համաձայնեց։

Նախագահ Ընտրողական Ժողովի
Սահակ Եպիսկ. Այվատեան

Ատենապետ ժողովի
Տօքթ. Կ. Փաշայեան

Ատենադպիր ժողովի
Մարտիրոս Յարութիւնեան

Առաջնորդական Ընտրութեան պատգամաւորներ

Քահանայ Բերդաթաղի Ս. Աստուածածին Եկեղեցու
Քահանայ Կիլաւա Թաղի Ս. Սարգիս Եկեղեցու Յակոբ Քահանայ Տէր Յակոբեան
Պատգամաւոր Արամեան վարժարանի հոգաբարձութեան
Պատգամաւոր Արամեան վարժարանի ուսուցչաց
Պատգամաւոր Բերդաթաղի ծխական.
Պատգամաւոր Բերդաթաղի ծխական.
Պատգամաւոր Բերդաթաղի ծխական.



Պատգամաւոր Բերդաթաղի ծխական.
Պատգամաւոր Կիլաւայի Հայկազեան վարժ. հոգ. Մատթէոս Յովսէփեան
Պատգամաւոր Կիլաւայի Հայկազեան վարժ. ուսուցչ. Միքայէլ Զառաֆեանց
Երեցփոխ Ս. Աստուածածին եկեղեցու
Երեցփոխ Ս. Սարգիս Եկեղեցու Արշակ Ղորդանեանց
Կիլաւա Թաղի ծխականների պատգամաւոր՝ Բաղդասար Մելիք-Սարգսեան
Կիլաւա Թաղի ծխականների պատգամաւոր՝ Յակոբ Մելիք Սարգսեանց
Կիլաւա Թաղի ծխականների պատգամաւոր՝ Տօքթ. Կ. Փաշայեան
Կիլաւա Թաղի ծխականների պատգամաւոր՝ Տիգրան Ռաշմաճեան
Պատգամաւոր Արդաբիլի Թաթէոս Աֆթանդիլեանց
Պատգամաւոր Արդաբիլի
Պատգամաւոր Մարաղայի
Պատգամաւոր Մարաղայի
Պատգամաւոր Մէչափար եւ Մնջլան Ղարադաղ Բաղդասար Մելիք Սարգսեանց
Պատգամաւոր Մէչափար եւ Մնջլան Ղարադաղ Յակոբ Մելիք Սարգսեանց
Պատգամաւոր Տիզմարի Ղարադաղ
Պատգամաւոր Տիզմարի Ղարադաղ
Պատգամաւոր Մակուի
Պատգամաւոր Մակուի Տիգրան Ռաշմաճեան
Պատգամաւոր Խոյի
Պատգամաւոր Խոյի Մարտիրոս Յարութիւնեանց
Պատգամաւոր Ուրմիոյ եւ Բարանդուզի Տօքթ. Կ. Փաշայեան
Պատգամաւոր Ուրմիոյ եւ Բարանդուզի
Պատգամաւոր Սալմաստի Զիբրայէլ Բուդաղեան
Պատգամաւոր Սալմաստի Սամսոն Բուդաղեան

Վիճակաւոր Առաջնորդ
Հայոց
Ատրպատականի
Թիւ 468
1894 ամի յ 2 Օգոստոսի
Դավրէժ

Հոգաբարձութիւն հոգեւոր ուսումնարանի

Հայոց Մարաղայ քաղաքի

Առաջադրութիւն,

Ինչպէս ծանօթացանք Ձեր հաշուետուութեան արձանագրութիւնից դպրոցական գումարները չահեցնում էք առ հարիւրին տասն տոկոսով։ Դավրիժու երկթաղի երկսեռ դպրոցների հոգաբարձուք բարի նախանձախնդրութեամբ վճռած են ուր եւ միշտ չահեցնում են ուսումնական եւ եկեղեցական գումարներն առ հարիւրին տասներկու տոկոսով, որպէսզի հնարաւորութիւն ունենան իւրեանց բազմակարօտ պէտքերն լցուցանել։ Վերոյգրելոյ մասին Ձեր Մեծապատուութեանց ծանօթութիւն տալով ազգի զաւակաց դաստիարակութեան սիրոյն առաջարկում ենք Ձեր յարգութեան եթէ հնարաւոր է, աշխատիլ տասնեւերկու տոկոսով տալ դպրոցական գումարներն եւ այն հաւատարիմ մարդկանց, որ կորուստ չունենանք ի զրկանս ուսումնարանին։

Թեմական Առաջնորդ Վիճակին
Սուքիաս Արքեպ. Պարզեանց

Վիճակաւոր Առաջնորդ
Հայոց
Ատրպատականի
Թիւ 467
յ 2 Օգոստոսի 1894 ամի
Ի Դավրէժ

Մեծապատիւ նախորդ հոգաբարձուաց հոգեւոր դպրոցին հայոց Մարաղայի՝ պարոնայք Միրզայի Աֆթանդիլեանց, Մելքոնի Խալաֆեանց, Խաչատրոյ Մկրտչեանց, Պետրոսի Եսայեանց եւ Կոստանդին Սարգսեանց:

Ցիսուսաւանդ ողջունիւ ծանուցանում ենք,

Մարաղայ քաղաքի բարեպաշտօն հասարակութիւնն՝ համաձայն մեր առաջադրութեան առաջնորդական փոխանորդ պարոն Լալայ Տէր Յակովբեանցի անունով տարւոյս Յունիս ամսոյն 20-ին ընդ համարաւ 386, որ հիմնուած է Ձեր Մեծապատուութեանց մեր անուամբ նոյն ամսոյ (18-ին գրուած) 18-ին գրուած հրաժարաթղթոյն վերայ նախանցեալ Յուլիսի 9-ին համագումար ժողով կազմելով դպրոցի սրահումն վերստին ընտրած են Ձեզ՝ այսինքն պարոնայք Միրզայ Աֆթանդիլեանց, Մելքոն Խալաֆեանց, Խաչատուր Մկրտչեանց, Պետրոս Եսայեանց եւ Կոստան Սարգսեանց, երեքամեայ ժամանակաւ հոգաբարձական պաշտօնի: Դորանից յետոյ նոյն Աստուածասէր հասարակութիւնն անցեալ Յուլիսի 27-ին գումարելով միեւնոյն դպրոցում, տեսած են Ձեր մուտք ու ծախքի հաշիւն, որից երեւացել է «անցեալ 1893 թուականի Նոյեմբերի 28-ից մինչեւ 1894 տարւոյս Յուլիսի 27-ն զուտ արդիւնք 906 թուման, որը գտնվում է մի քանի յուսալից անձանց մօտ ամսեկան իւրաքանչիւր թումանին 10-ական տոկոսով, ուստի եւ յայտնում են պարոն Մելքոն Խալաֆեանցին որ գանձապահն է խորին շնորհակալութիւն»:

Ուրախութեամբ սրտի ընդունելով հաւատաւոր ժողովրդեան բարի վկայութիւն եւ վերստին ընտրութիւնն Ձեր յարգութեանց, սոյն հաղորդագրութեամբ հաստատում ենք Ձեզ, յարգարժան սիրելիք, հոգաբարձական պաշտօնի մէջ այլեւս երեքամեայ ժամանակաւ: Ներկայիս հաւատում ենք թէ Դուք անձընծայ ջերմեռանդութեամբ ստանձնում էք այդ նուիրական պարտաւորութիւն, որպէսզի համազգի զաւակաց կրթութեան սուրբ գործին ըստ Ձերոյսանն հնարաւորութեան ծառայութիւն մատուցանէք: Ուստի հոգեկան ջերմեռանդութեամբ աղաչում ենք Ամենաբարձրեալից մարդասիրութիւնն՝ կարողացուցանել զՁեզ հոգեկան եւ մարմնական բարեմասնութեամբ լիակատար բաւականութիւն տալ համադրացի եղբարց յուսալից պահանջներին իւրեանց որդւոց դաստիարակութեան վերաբերութեամբ, որով ընկալնուլ վարձատրութիւն Աստուծոյ անսահման բարութենէն եւ գովութիւն հասարակութեան երախտագիտութենէն Ամէն:

Թեմական Առաջնորդ Հայոց Ատրպատականի
Սուքիաս Արքեպ. Պարզեանց

## Օրինակ

Նորին բարձր սրբազնութեան
Տ. Սուքիաս Արքեպիսկոպոս Պարզեանց

Մարաղայի հայ հասարակութիւնից ամենախոնարհ խնդիր.

Անցեալ ամսում Մարաղայի հասարակութիւնն իւր երկեակ խնդիրներով դիմեց Ձերդ Բարձր Սրբազնութեանը՝ կարգադրութիւն խնդրելով ծագած տեղական խնդրի մասին: Միեւնոյն ժամանակ իւր դժգոհութիւնն յայտնելով ներկայ Առաջնորդական տեղապահի դէմ թուելով մի



քանի փաստեր նոյն տեղապահի գործունէութիւնից. Ձերդ Բարձր Սրբազնութեան կողմից ոչ մի հրաման, ոչ մի կարգադրութիւն չեկաւ. Մարաղայի հասարակութեան խռովութեան այդ հիմնաքարը մնաց. Խնդիրը աւելի բարդուեցաւ եւ անլուծելի հարցի կերպարանք ստացաւ: Վերջին թուով Ձերդ Բարձր Սրբազնութիւնը հրամայել էր Տաճատ քահանայ Սրապիոնեանին տալ ծուխ եւ դարձնել ծխական քահանայ, իրաւունք տալով նորան օգտուիլ հաւասար չափով ծխական արդիւնքներից: Բայց հակառակ ժողովրդեանս կամքի մի քանի հոգի եւ տեղապահը սկսեցին ժողովրդեան գրգռել Ձերդ Բարձր Սրբազնութեան արձակած հրամանի դէմ. որոշեցին մի որոշ գումար տալ տէր հօրը ի բաց կացուցանելով ծխական իրաւունքներից եւ արդիւնքներից: Խնդրագրովս մեր դժգոհութիւնն ենք յայտնում Առաջնորդական տեղապահի այդ վարմունքի դէմ: Մարաղայի հասարակութիւնը լաւ հասկանալով այս նոր խնդիրների ծագման պատճառը, միեւնոյն ժամանակ լաւ ճանաչելով այդ ծագող խնդիրների հեղինակին, խնդրում է չզրկել Տէր Տաճատ քահանային ծխական իրաւունքներից: Հրաժարեցնել Առաջնորդական տեղապահին, միակ ճանապարհն է որ հասարակութիւնը գտել է որ կտանի Մարաղայի հասարակութեան դէպի խաղաղութիւն: Սրբազան հայր աղաչում ենք մենք խեղճ հայերս որ Տէր հօրն մեզ ծխացի կարգէք ըստ հրամանի Ձերում եւ անշուշտ մեզ ազատէք այս փառասէր ու շահամոլ տեղապահից:

Մնամք Ձերդ Բարձր Սրբազնութեան ամենախոնարհք
ծառայք Մարաղայի ծերունիք՝

ի 15 Դեկտ. 94

| | |
|---|---|
| Լալայ Տէր Յակովբեան | Ալլահվերդի Յարութիւնեան |
| Սայեադ Խուդավերդեան | Աւագ Մարգարեան |
| Խուդավերդի Պողոսեան | Աբրահամ Ռուստամեան |
| Մհտ. Զիատ Վարդանեան | Ազիզ Կարապետեան |
| Խաչատուր Միքայէլեան | Սարգիս Պապայեան |
| Խաչատուր Գէորգեան | Ալլահվերդի Սարգսեան |
| Ալլահվերդի Խուդավերդեան | Աբրահամ Վարդանէսեան |
| Քարամ Խուդավերդեան | Սուլթան Հայրապետեան |
| Յարութիւն Էյվազեան | Ստեփան Պազարեան |
| Եղիա Յարութիւնեան | Խրդիր Բայրամեան |
| Մուխտար Էյվազեան | Օհան Համբարձումեան |
| Պուտաղ Խաչիկեան | Մնացական Մուրշիդեան |
| Մհտ. Ալլահվերդի Ստեփանեան | Աղաջան Կարանեան |
| Մհտ. Հայրապետ Պողոսեան | Աստուածատուր Իսահակեան |
| Էյվազ Փահրատեան | Աստուածատուր Միքայէլեան |
| Թադէոս Շահպազեան | Աբրահամ Բայրամեան |
| Պետրոս Տերունեան | Համբարձում Ալլահվերդեան |
| Մհտ. Խրդիր. Խուդավերդեան | Սարգիս Եսայեան |
| Աստուածատուր Վարդանեան | Կոստան Գալստեան |
| Եղեայ Ալլահվերդեան | Պողոս Ալէքսանեան |
| Իսահակ Թումանեան | Նարման Պատալեան |
| Սարգիս Միքայէլեան | Գաբրիէլ Միքայէլեան |
| Գրիգոր Ռոստոմեան | Ռուստամ Էյվազեան |
| Շահպազ Ղազարեան | Աբի Յակովբեան |
| Յակովբ Պապայեան | Համբարձում Յովսեփեան |
| Կարապետ Շահպազեան | Մելքոն Օրդուխանեան |
| Անտոն Ալլահվերդեան | Սարգիս Առաքելեան |

Առաքել Մարգարեան
Յովհաննէս Առաքելեան
Բաբայ Ռուստամեան
Յարութիւն Ստեփանեան
Մհտ. Բէգլար Պետրոսեան
Յովհաննէս Ռուստամեան
Յովնան Պետրոսեան
Յովհաննէս Պետրոսեան
Յովհաննէս Աբրահամեան
Աբրահամ Պապայեան Յովսէփ
Յովսէփ Եղեայեան
Աղաճան Պապայեան
Աղաճան Պուտաղեան
Յակոբ Մարգարեան
Յովսէփ Սարգիսեան
Մհտ. Կարապետ Ղեւոնդեան
Ղահրաման Պատալեան
Դաւիթ Պապայեան
Յարութիւն Խուդեան
Վարդազար Տէր Յակոբեան

Իսկականի հետ համեմատեցի՝
Սուքիաս Արքեպ. Պարզեանց։

Վիճակաւոր
Առաջնորդ Հայոց
Ատրպատականի
Թիւ 770
Ի 22 Դեկտեմբերի 1894 ամի
Դավրէժ

Հոգաբարձուի ուսումնարանին հայոց

Մարաղայ քաղաքի՝ Մեծապատիւ Մելգոնայ Խալաֆեան

Յիսուսաւանդ ողջունիւ ծանուցանեմք

Նախանցեալ Նոյեմբեր ամսոյ 22 Ընդ համարաւ 704 առաջադրութեամբ պատուիրեցինք մեր յարգելի առաջնորդական տեղապահ Միրզայ Աֆթանդիլեանցին դպրոցի հոգաբարձուներին եւ բոլոր ժողովականաց, որպէսզի հասարակական ժողով կազմեն եւ վճիռ կայացնեն երկու քահանայք ծխական արդիւնքն հաւասար բաժանեն իւրեանց մէջ։ Իսկ թէ Աղէքսանդր քահանայն կհակառակի, այն ժամանակ քաղաքի ժողովուրդն երկու հաւասար ծուխ բաժանել եւ իւրաքանչիւր ոք իւր բաժինն հովուէ եւ արդիւնքն ստանայ, գիւղերն էլ փոխ առ փոխ հովուին։

Մեր կարգադրութեան իրագործման մասին դեռ եւս մի պատասխան չստացած պարոն առաջնորդական տեղապահ Միրզայ Աֆթանդիլեանցից՝ ստացանք տեղւոյդ հասարակութեան բողոքագիրը պարոն տեղապահի անարդար վարմանց համար։ Որովհետեւ ազգիս սրբազնասուրբ Հայրապետի հրամանաւ արժանապատիւ Տաճատ քահանային մեք կարգած ենք Մարաղայի եւ շրջակայ եկեղեցեաց բարեկարգիչ, միեւնոյն ժամանակ եւ քաղաքիդ աւագ քահանայ, ուստի բնաւին չենք համաձայնիլ որ տեղւոյդ հասարակութիւնն նորան համարէ իբրեւ հիւր եւ առժամանակեայ հովիւ, իսկ Աղէքսանդր անուն անգրագէտ երէցն ընդունի իբրեւ մշտական քահանայ՝ որին իսպառ դադարեցնել ն սրբազնագործութիւնից առաւել բարւոք է քան թէ թողուլ ժողովուրդ մոլորեցնի։

Վերոգրեալց մասին Ձեր Մեծապատութեանն տեղեկութիւն տալով սորա հետ ուղարկում ենք տեղւոյդ ժողովրդեան բողոքագրի օրինակն եւ սիրով ն Յիսուսի պատուիրում ենք Ձեզ՝ շուտով կատարել մեր վերոյգրեալ պատուէր պարոն տեղապահի անունով ն, ի հակառակ դէպս դոյն



խնդրագրի մէջ ստորագրած բոլոր ժողովրդականք յանձնել Տէր Տաճատ քահանայի հովութեան եւ մեզ տեղեկութիւն տալ պարտու ապարշաճ կարգադրութիւնք առնել պարոն տեղակալի մասին։

Թեմակալ Առաջնորդ Ատրպատականի՝
Սուքիաս Արքեպ. Պարզեանց

Վիճակաւոր Առաջնորդ
Հայոց
Ատրպատականի
Թիւ 5
1895 ամի յ 3 Յունուարի
Դավրէժ

Հոգաբարձուի ազգային դպրոցին
Մարաղայ քաղաքի Մեծապատիւ Մելքոնի Խալաֆեան

Յիսուսաւանդ ողջոյն եւ օրհնութիւն

Շնորհակալու մտօք ընկալայ Ձեր մեծապատութեան շնորհաւորական, միանգամայն եւ յանձնարարական անցեալ Դեկտեմբերի 30-ին արձակած պատուական գրութիւնն։ Կմաղթիմ Ձեզ յԱստուծոյ ամենակերպ յաջողուածք, առողջութիւն եւ բաղդաւորութիւն ներկայ ամանորիս ընծայքումն ի մխիթարութիւն Ձեր տիրախնամ գերդաստանի, մատաղերամ մանկանց քաղաքիդ ազգային վարժարանի եւ յուրախութիւն Ձեր բոլոր բարեկամաց ի թիւս որոց եւ ինձ։

Նորատիպ Ճաշոցի համար վաղիւն կգրեմ յԵրեւան եղբօրս որդւոյն, որպէսզի ի Ս. Էջմիածին հանդիպելով՝ գնէ եւ հաւատարիմ եկաւորով ուղարկէ, զոր ստանալուս պէս անյապաղ կհասուցանեմ Ձեր սիրելիութեան։ Քաղաքիս եկեղեցեաց մէջ չկար աւելորդութեամբ թէ հին եւ թէ նոր տիպ, ապա թէ ոչ այստեղից կուղարկէի շուտով։

Ձեր որդեակ Արշակն՝ որքան ինչ հետաքրքիր եմ ուսուցիչներից, իւր ուսման մէջ բաւարար յաջողակութիւն ունի։ Իմ երբեմնակի խրախուսանքս նորանից անպակաս չեմ առնիլ, նմանապէս եւ պարտաւորական հայրօրէն խրատաբանութիւնս։

Յանձնելով զՁեզ Աստուծոյ շնորհացն, մնամ, խոնարհ աղօթարար։
Թեմակալ Առաջնորդ Հայոց Ատրպատականի
Սուքիաս Արքեպ. Պարզեանց

Վիճակաւոր Առաջնորդ
Հայոց
Ատրպատականի
Թիւ 86
1895 ամի ի 16 Յունվարի
Դավրէժ

Հոգաբարձուի ազգային յուսումնարանի
Հայոց Մարաղայի պարոն Մելքոնի Խալաֆեանց։

Քրիստոսական ողջունիւ ծանուցանեմք

Ընկալայ Ձեր ամսոյս 12-ին գրած նամակն եւ շատ ուրախ եղայ՝ որ երկու քահանայից համաձայնադրել էք միաբանութեամբ հովուին քաղաքի եւ գիւղօրէից ժողովուրդն եւ հաւասարապէս բաժանին արդիւնքն։ Ի հարկէ Աղէքսանդր քահանայն իրաւունք չունի տէր Տաճատի դպրոցից

ստացած ուսուցչութեան ոռճիկից մասն ստանալու, որովհետեւ այդ նորա անձնական աշխատութիւնն է, մանաւանդ որ տէր Տաճատն իբրեւ օտարական տան վարձ պիտի տայ, իսկ տէր Աղէքսանդրն իբրեւ տեղացի սեփական տուն ունի: Գալով այն կէտին թէ Մարաղան եւ իր շրջակայ գիւղօրայք երկու քահանայ պահպանել անկարող են պէտք է ասենք որ վաղուց ի վեր երկու են եղած տեղական երիցունք: Ցառաջ ժողովուրդն առաւել սակաւ էր, իսկ այժմս առաւել շատ: Բացի դորանից տէր Տաճատն անհրաժեշտաբար հարկաւոր է այդ կողմերի եկեղեցեաց եւ դպրոցների բարեկարգութեան գործին:

Շատ ցաւեցայ որ արգոյ տեղապահի մասին ի զուր գրաւոր տրտունջ է հասած մեզ: Նշանակութիւն չտուին նորան եւ երբէք չենք ցանկանալ մենք որ Դուք բարեհաճիք այն թուղթը ստորագրողներին ժողով հրաւիրէք եւ քննութիւն անէք: Ըստ որում այդպիսով տեղւոյդ բարեպաշտօն ժողովրդեան մէջ խաղաղութիւնն առաւել վտանգի կենթարկուի եւ անախորժ հետեւանքներ կունենայ, որոյ յառաջ բերած չարիքն աւելի վնասակար կլինին դպրոցական եւ եկեղեցական գործերին քան օգտակար: Այդպիսի ստոր խաբէութեանց միջոցներն լաւ է արհամարհել քան նշանակութիւն տալ:

Արգոյ Միրզայ Աֆթանդիլեանցին ես միշտ պաշտպանած եմ եւ պէտք է պաշտպանեմ, ըստ որում նա իմ պարտքս է կատարում ժողովրդեան անդորրութեան գործումն: Իսկ տէր Տաճատի նորա հետ միաբանութեամբ գործելու մասին՝ ինքն ըստինքեան յայտնի է, որովհետեւ երկուսի պարտաւորութիւնն եւս միեւնոյն է, մինն հասարակութեան մարմնաւոր տխրութեանց համար, իսկ միւսն հոգեւոր մխիթարութեանց:

Ուրեմն ոչ մի օգուտ չկայ թէ իրենց, թէ ինձ եւ թէ ժողովրդեան համար, եթէ նոքա միմիանց հետ անհաշտ եւ անհամաձայն լինին: Այս խմաստով եւս գրած եմ արժանապատիւ տէր Տաճատին որ այլոց խորհրդով չշարժի եւ հասարակութեան հակառակութեան պատճառ չտայ:

Ըստ Ձեր յանձնարարութեան ճաշոց Գիրքն երբ ստացուի կյայտնեմ պարոն Ցարութիւն Միրզայեանցին: Տէր Աղէքսանդրի վերայ չնորհ ունենալու մասին գրեցի արգոյ Միրզայ Աֆթանդիլեանցին ինչ որ պէտքն էր: Ցերեկի Ձեր սիրեցեալ որդի Արշակի հետ ըստ երկար խօսակցութիւն ունեցայ: Շատ ուրախ եմ նորա հասուն խոհականութեամբն եւ առողջաղատութեամբն: Մեծ յոյս ունիմ, որ նա ապագայումն Ձեր մխիթարութիւնն պէտք է լինի:

Թեմական Առաջնորդ Հայոց Ատրպատականի՝
Սուքիաս Արքեպ. Պարզեանց

Վիճակաւոր Առաջնորդ
Հայոց
Ատրպատականի
Թիւ 172
1895 ամի ի 13 Մարտի
Դավրէժ

Հոգաբարձուի եւ գանձապահի ազգային դպրոցին Մարաղայի՝
Մեծապատիւ Մելգոնի Խալաֆեանց

Ցիսուսաւանդ ողջոյն

Ընկալայ Ձեր սիրելիութեան գրութիւնն արձակած ամսոյս 8-ին եւ սորա հետ ի միասին գրեցի Մարաղայ քաղաքիդ ազգային վարժարանի հոգաբարձուաց, որպէսզի ստանան Ձեր յարգութիւնից դպրոցական հաշիւներն եւ յանձնեն իրենց երաշխաւորութեամբն մի հաւատարիմ անձնաւորութեան ի պահպանութիւն, ուրեմն բարեհաճեցէք յանձնել այն անձին, որին յարմար եւ արժանաւոր կհամարի Հոգաբարձական ժողովն:



Մեծապատիւ սիրելի մեր ի Տէր, արժանահաւատ անձինքների բանաւոր պատմածներից տեղեկութիւն ունենալով Ձեր բազմամեայ, արդիւնաւոր եւ բարեխիղճ հոգաբարձական պաշտօնավարութեանց մասին եւ առաւելապէս դրամական եկամուտները ճոխացնելու՝ սորանով յայտնում ենք Ձեզ մեր սրտագին շնորհակալութիւնն եւ յուսով ապագայ Ձեր անձնուէր ծառայութեանցն առժամեայ կերպով արձակուրդ իսկ տալիս Ձեր մեծապատուութեան գործերի պատճառով բացակայել քաղաքից: Մաղթում ենք Ամենաբարձրեալից վարձատրել զՁեզ ըստ հոգւոյ եւ մարմնոյ ազգային կրթական հաստատութեան մատուցած Ձեր պատրաստակամ ծառայութեանց մասին եւ պարգեւել յաջողութիւն յառաջիկայ ճանապարհորդութեանց ժամանակ անփորձութեամբ վերադառնալ Ձեր բնակավայրն:

Թեմական Առաջնորդ Հայոց Ատրպատականի՝
Սուքիաս Արքեպ. Պարզեանց

Վիճակաւոր
Առաջնորդ Հայոց
Ատրպատականի
Թիւ 381
28 Յուլիսի 1895 ամի
Ի Դավրէժ

Պատուարժան հոգաբարձութեան եւ
բարեպաշտ հայ հասարակութեան
Մարաղայի

Ողջոյն Տիրաշնորհ

Տեղւոյդ ուսումնարանի հոգաբարձութեան գանձապահ Մեծարգոյ պարոն Մելքոն Խալաֆեան Արդաբիլէն եկած էր այսր. տեսնուեցանք իրեն հետ եւ խօսեցանք տեղւոյդ ազգային ինչ ինչ խնդրոց մասին, որոնք վերջերս վէճ ու խռովութիւն յարուցած էին մեր սիրելի ժողովրդեան մէջ: Դորանց գլխաւորն էր քահանայից հասոյթի բաշխման խնդիրը. այս մասին թէպէտ մենք մի նոր կարգադրութիւն արած էինք եւ պիտի հաղորդէինք ձեզ ի գործադրութիւն, բայց արժանապատիւ Տ. Տաճատ քահանայն աստ գալով յայտնեց մեզ թէ ինքն իսպառ կհրաժարի ի Մարաղա պաշտօնավարելէ, որով այդ մի կնճիռը բարձած եղաւ:

Վարժարանի ուսուցչի մասին եւս կջանամք յարմարաւոր մէկը գտնել եւ ուղարկել: Իսկ պարոն գանձապահը վերադառնալով յայդր, մտադիր էր իւր հաշիւը տալ եւ հրաժարիլ իր գանձապահական պաշտօնէն, բայց ես ի նկատի ունենալով իւր բազմարդիւն ծառայութիւնը, զոր մատուցած է տեղւոյդ վարժարանին եւ ժողովրդեան եւ որ գնահատուած է արդէն նորին բարձր սրբազնութիւնէն՝ Ատրպատականի Հայոց առաջնորդէն, կառաջարկեմ որ ժողովուրդը այսպիսի անձնաւորութիւնները ձեռքէ չթողու եւ ջանայ միշտ գործի վրայ պահել յօգուտ յառաջդիմութեան ազգային կրթութեան:

Ես յատկապէս խնդրած եմ պարոն Մելքոն Խալաֆեանէն, որ իմ կողմանէ միջնորդ լինի ի միմիանց գժտեալ ամեն դասակարգի հայոց մէջ եւ խաղաղութիւն ու սէր վերահաստատել աշխատի: Վստահ եմ որ դուք ալ սիրայօժար ունկն կդնէք նորա խօսքերուն: Կը յորդորիմ զձեզ սիրովն Ցիսուսի, որ չնչին խնդիրներ առիթ բռնելով թշնամաբար չվարուիք մէկմէկու հետ, որպիսի ընթացք երբէք վայել չէ բարեկիրթ մարդու, մանաւանդ քրիստոնէի: Երբ այնպիսի կնճռալից խնդիրներ ունենաք, որոնց կարգադրութիւնը ձեզ համար դժուարին կլինի եւ վէճեր ու խռովութիւններ կյարուցա-

*նէ, այդպիսի խնդրոց համար կրնաք դիմել ուղղակի առաջնորդարանս, որ առանց աչառութեան, կողմնակցութեան եւ կրքի լաւագոյնը կտնօրինէ ձեզ համար։*

*Մաղթելով ամենեցունցդ սէր, յաջողութիւն եւ բաղդաւորութիւն։*

*Մնամ աղօթարար*
*Առաջնորդ. փոխանորդ Ատրպատականի*
*Յովսէփ վրդ. Սարաճեան*

*Նորին յարգութեան եւ մեծապատիւ ազգասիրի*
*պրն. Մելքոնայ Խալափեանց*

*Տեղւոյս ժողովրդեան կողմից ամենախոնարհ խնդիր*
*Մեծ. Պարոն*

*Մենք Մարաղայի հայ հասարակութիւնս երկար տարիների ընթացքում ընդ միշտ վայելելով բարեկեցիկ եւ անդորր կեանք Ձեր բարեխնամ ղեկավարութեան ներքոյ, եւ ըստ նմին թէ ազգային եւ թէ կրօնական յառաջադիմութիւններս, որոնք այսօր փոքր ի շատէ հաստատուն գոյութիւն ունին, Ձեր անդուլ աշխատութեան շնորհաց արգասիքն է եւ տարէ ց տարի բարգաւաճման վերայ է, որպէս Արեգ անուրանալի են մեզ տեղացիներիս եւ ի բոլոր սրտէ խոստովանում ենք իբրեւ դիւցազանց յիշատակք անջնջելի կերպով դրոշմուած են սրտերուս վերայ ու առ այդր բարեցապարտ ենք ու խոնարհութիւններս յատակայ է դէպի Ձեզ. եւ եթէ ձեր արդար վարձը ամբարուած է երկնքում ապագայում պիտի ստանաք Փրկչից. որպէս խոստացել է Աստուածային խոստմամբ «Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորեալք եւ ես հանգուցից զՁեզ» ահա Ձեր սրբազան գոչման ամենաբարձր նշանակութիւնը»։*

*Բայց եւ այնպէս ի ցաւ սրտէ ըսելով համայն հասարակութիւնս, որ դուք Ձեր պաշտօնից ձանձրոյթ զգալով կամ թէ հասարակութիւնից սրտնեղանելով գրաւոր հրաժարական ներկայացրել էք Ատրպատականի հայոց հոգեւոր իշխանութեան ատենին, որպէսզի ձեզ հրաժարուած համարէ Ձեր աշխատութիւն բաւ համարելով. սակայն եւ այնպէս քաղաքիս ամբողջ հասարակութիւն ամսոյս 27/8-ին օր կիւրակի ընդհանուր ժողով կայացնելով եւ ժողովի միասիրտ համաձայնութեամբ կըրկին Ձեզ ընտրեցինք. ի ներքոյ ստորագրողներս աղերսաթերթովս ու որդիական յարգանքով ներկայացնում ենք Ձեզ, Ձեր գութը շարժելու ու ընդունել հայրաբար խնդիրս — այն է նորէն կրել ձեր վրայ ազգի հարքաշ մշակութեան — հոգաբարձական եւ գանձապահական պաշտօնը, որով պատճառ լինիք ազգիս դեռահաս ու դեռափթիթ մանկանց յառաջադիմութեան ինչպէս եղած էք մինչեւ այժմս, բայց ձեր հրաժարուելովն կլինիք յետադիմութեան եւ այդքան աշխատութիւններդ էլ կորած կլինի առ այս վստահ ու լիայոյս ենք որ հայրական աչօք ի խիղճ կզգաք խոնարհ որդւոցդ դառն աղերսանքը ընդունելու եւ չէք մերժել այլ կփութաք մեր անվերջ վշտակցութեան ձեռք կարկառել դարմանելու։ Որոյ մասին ստորագրում ենք։*

1.
2. *Մհտ. Յակոբ Մնացականեան*
3. *Շահբազ Վարդանեան*
4. *Բաղալ Յարութիւնեան*
5. *Բաիամ Խուդավերդեան*
6. *Կոստան Սարգսեան*
7. *Սարգիս Գրիգորեան*
8. *Մելքոն Բաղդասարեան*
9. *Ուսուբ Զիադեան*
10. *Գուլբաբայ Աթանեան*
11. *Սանթուր Գէորգեան*
12. *Ամիրխան Սահակեան*
13. *Մկրտիչ Բաբայեան*
14. *Գիւլբտաղ Վարդանեան*
15. *Պետրոս Եսայեան*
16. *Խաչատուր Սարգսեան*
17. *Կարապետ Ղեւոնդեան*
18. *Մարգարայ Սարգիսեան*
19. *Բաղդասար Մարտիրոսեան*
20. *Պօղոս Ալէքսանեան*
21. *Խաչատուր Սարգսեան*
22. *Յարութիւն Պօղոսեան*
23. *Աւագ Մարգարեան*
24. *Յովհաննէս Ռուստամեան*



25. *Ամրահ Ստեփանեան*
26. *Սուլթան Աթանեան*
27. *Աղաջան Կարապետեան*
28. *Մովսէս Աթանեան*
29. *Ռուստամ Վարթազարեան*
30. *Սարգիս Յակոբեան*
31. *Հախվերդի Բաբայեան*
32. *Ուտայ Ասլան Մուրչիդեան*
33. *Մ. Յարութիւն Մխիթարեան*
34. *Շաբազ Գուզարեան*
35. *Սուլթան Էյվազեան*
36. *Յովհաննէս Բուդաղեան*
37. *Մասիհ Աւագեան*
38. *Էյվազ Դայրափեան*
39. *Աթու Յարութիւնեան*
40. *Ստեփան Ղազարեան*
41. *Առաքել Մարգարեան*
42. *Յակոբ Գրիգորեան*
43. *Մուղտսի Աստուածատուր Մնացականեան*
44. *Մովսէս Ալլահվերդեան*
45. *Կարապետ Վարդազարեան*
46. *Մհտս. Լալազար Մանասէրեան*
47. *Եղիա Յարութիւնեան*
48.
49. *Աբգար Աբրահամեան*
50. *Մհտս. Աւագ Վարդանեան*
51. *Մեսրոբ Կարապետեան*
52. *Յովնան Տէր Փիլիպպոսեան*
53. *Մարգար Տէր Փիլիպպոսեան*
54. *Զաքարիա Տէր Փիլիպպոսեան*
55. *Պալար Պետրոսեան*
56.
57. *Ղազար Յարութիւնեան*
58. *Եղիազար Մանասէրեան*
59. *Ստեփան Կարանեան*
60.
61. *Յովհաննէս Պապայեան*
62. *Մնացական Մուրչիդեան*
63. *Նահապետ Յակոբեան*
64. *Յովսէփ Մարգարեան*
65. *Սարգիս Եսայեան*
66. *Մովսէս Զաքարեան*
67. *Գասպար Բաղդասարեան*
68. *Նարման Բաղալեան*
69. *Սուլէյման Բաղալեան*
70. *Մհտս. Բաղալ Աբրահամեան*
71. *Մելքոն Օրդուխանեան*
72. *Մհտս. Բաբա Ռուստամեան*
73. *Ղահրաման Բաղալեան*
74. *Ղազար Բաղդասարեան*
75. *Յակոբ Մովսէսեան*
76. *Աբի Յովսէփեան*
77. *Ներսէս Շահբազեան*
78. *Յովսէփ Մարգարեան*
79. *Ղազար Ղեւոնդեան*
80. *Գալուստ Ստեփանեան*
81. *Յովնան Տէր Վարդանեան*
82. *Յովհաննէս Աբիչեան*
83. *Գրիգոր Բաբայեան*
84. *Խաչատուր Մկրտիչեան*

*Համաձայն Մարաղայեցի ժողովրդեան մեծամասնութեան ցանկութեան, Ատրպատականի Բարձր. առաջնորդարանից 15 Սեպտեմբեր 1895 պաշտօնական նամակի դիմումով խնդրուած է պ. Մելքոն Խալաֆեանցի վերահաստատումը ի պաշտօն գանձապահական եւ հոգաբարձական ցգալուստ նորին բարձրապատուութիւնից վերահաստատման պաշտօնական գրութեան, կարէ պաշտօնավարել։*

15 *Սեպտ.* 1895
*Ի Մարաղայ*

*Առաջնորդական Տեղապահ՝*
*Միրզա Գ. Աֆթանդիլեան*

*Վիճակաւոր Առաջնորդ*
*Հայոց*
*Ատրպատականի*
*Թիւ* 433
1895 *ամի* 18 *Սեպտ.*
*Դավրէժ*

Արժանապատիւ տ. Տաճատ քահ. Սրապիոնեան
բարեկարգիչ եկ. հայոց Մարաղայի եւ
Մեծարգոյ Միրզայ Աֆթանդիլեանց՝
Առաջնորդական փոխանորդ տեղւոյն

Ստացանք Ձեր Սեպտեմբեր 15 ամսաթիւ գրութիւնը, որով կխնդրէինք պարոն Մելքոն Խալաֆեանի վերահաստատութիւնը ի պաշտօն գանձապահութեան հոգաբարձութեան քաղաքիդ։ Այս մասին մենք արդէն անձամբ թէ գրով շատ խնդրեցինք իրմէ, որ չհրաժարի եւ ժողովրդեան ալ յանձնարարեցինք, որ զինքը վերստին ընտրէ, բայց որովհետեւ իւր Օգոստոս 10 ամսաթիւ նամակաւը թախանձած էր զմեզ, որ ընդունեմք իր հրաժարականը խօստանալով որ ինքը դարձեալ հարկ եղած աջակցութիւնը չպիտի խնայէ յօգուտ եւ ի բարելաւութիւն վարժարանի, այս պատճառով մեր Օգոստոս 14 ամսաթիւ եւ 397 թուահամար նամակաւ առաջարկած էինք մեր տեղապահին, որպէսզի խօսելով վարժարանի հոգաբարձութեան ընդունին իր հրաժարականը եւ զայլ ոք կարգին ի տեղի նորա։ Այժմ որ ժողովուրդ կփափագի վերստին զինքն ընտրել գանձապետ եւ ինքն ալ կհաճի ընդունիլ մեզ համար եւս ուրախալի եւ ընդունելի է, որովհետեւ իր ծառայութիւնքը մեզ արդէն ծանօթ եղած են։

Թաղիապատցի մերազգայնոց թիւրքերէն կրած նեղութիւնները յիշելով գրած էիք թէ այդ մասին բողոքած են առ Սադրազամն եւ նոյն իմաստով բողոքագիր մալ յանուն Միւշիրը Միւլքին Ձեզ յանձնած են որ Ձեր նամակաւ ղրկէք առ մեզ։ Այդպիսի մի բողոքագիր չգտանք Ձեր նամակին մէջ, կերեւի մոռացմամբ այդտեղ թողած էք. հաճեցէք գործը շուտ լինելու համար այդ բողոքը հեռագրաւ ընել տալ յիշեալին, իմ միջոցաւ, որպէսզի մենք անձամբ տանեմք Միւշիրը Միւլքին եւ հարկ եղածը տնօրինել տամք։

Ձեր 71 թուահամար գրութեամբ ծանօթացած էինք թէ տեղւոյդ անկարգութիւնք եւ հակառակութիւնք տակաւին վերջ չեն գտած եւ գտանելիք ալ չունին, ուստի պարտաւորեցանք Սալմաստի փոխ-առաջնորդ արժ. Արսէն վարդապետ Վէհունին, որ իր վիճակին ինչ ինչ գործոց համար աստ կգտնուի, մեր կողմանէ գալ յայտը եւ վերջ տալ այդ անհամաձայնութեանց եւ կարգադրել բոլոր առ կախ խնդիրները։ Հաճեցէք պատշաճ մեծարանօք ընդունիլ զինքը եւ համակերպիլ նորա կարգադրութեանց, ապա թէ ոչ եթէ այս անգամ ալ մէկ կամ միւս կողմէն անհնազանդութիւն տեսնուի, այլ եւս գործ չպիտի ունենամ Մարաղայի խնդիրների հետ, որովհետեւ չեմք կարող վիճակին կենսական խնդիրները մի կողմ թողուլ եւ այդ չնչին խնդիրներով զբաղիլ։ Նորին արժանապատուութեան երթեւեկութեան ծախքեր պարտաւոր է տեղւոյդ հոգաբարձութիւնը վճարել։

Աղօթարար՝
Առաջն. Փոխ. Ատրպատականի՝
Յովսէփ Վրդ. Սարաճեան

Վարչութիւն
Ատրպատականի հայուհեաց
Բարեգործական Ընկ.
Թիւ 146
18 Մարտ 1899 ամի
Թաւրիզ

Համեստափայլ Տիկին,
Մարաղայ

Վարչութիւնս պատիւն ունի յայտնելու, որ իւր միամեայ գործունէութեան ընթացքն լրացած լինելով, ներկայիս ուղարկում է Ձեզ եկող տարուայ անդամակցութեան ստացագիրը։ Ինչ վերաբերում է մեր միամեայ գործունէութեան այդ կը ծանուցանէ Ձեզ տպած տեղեկագիրը։ Գալով տեղւոյդ կանանց ընկերութեան շատ գովելի է, բայց ինչու այդ ընկերութիւնը մերինին ճիւղ չը համարել, քանի որ նախաձեռնողները հէնց մեր անդամներն են եղել եւ նոցա աջակցութեամբ է հաստատուել։

Կը խնդրէինք այս մասին աշխատէիք եւ միացնէիք մերինի հետ, որ շատ իրաւացի էլ է եւ միանգամայն շահաւէտ. թէեւ նոյն է ուր որ էլ լինի դարձեալ եւ ով էլ հիմնած լինի, բարենպատակ է, բայց եւ այնպէս ինչու չը միացնել մի աւելի հիմնական եւ վաղուց ի վեր գոյութիւն ունեցող ընկերութեան հետ։

Արդ հաճեցէք այս մասին խօսել մերոնց հետ եւ մի կարգադրութիւն անել եւ մեզ յայտնել։

Լիայոյս ենք որ պիտի յաջողէք.

Մեծաւ յարգանօք ի դիմաց վարչութեան
Նախագահուհի՝ Հեղինէ Ժորժ

(Կնիք)